ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.03.2022թ. թիվ 26/26-1/3579-2022 գրությամբ «Вестрон» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.02.2022թ. թիվ Ե/40/392-22 գրության հիման վրա, 02.03.2022թ. թիվ 26/26-1/3579-2022 գրությամբ նախաձեռնել է «Вестрон» ՕՕՕ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «<u>Вестрон» ՕՕՕ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Вестрон» ՕՕՕ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Вестрон» ՕՕՕ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/87 ընթացակարգի շրջանակներում 10.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.02.2022թ. թիվ Ե/40/392-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրոնային տպատախտակների, կապի համապրոցեսորի ռելեների և ավտոմատ անջատիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-9/22» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի շրջանակներում «Վեստռոն» ՍՊԸ-ն (ՕՕՕ Вестрон) հայտարարվել է ընտրված մասնակից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը, «Վեստռոն» ՍՊԸ-ին գրավոր ներկայացվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-9/2201/010» պայմանագրի նախագիծը: Սահմանված ժամկետում «Վեստռոն» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և հրավերով պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված տուժանքի կամ կանխիկ գումարի տեսքով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև «Վեստռոն» ՍՊԸ-ի թիվ ԲՀ-10/71 առ 09.02.2022թ. գրությունը մասնակիցը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Վեստռոն» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/87 ընթացակարգի շրջանակներում 10.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար էլեկտրոնային տպատախտակների, կապի համապրոցեսորի ռելեների և ավտոմատ անջատիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-9/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Вестрон» ООО-ն

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Вестрон» ООО-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 02.02.2022թ. ծանուցել է «Вестрон» ООО-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. «Вестрон» ООО-ն Պատվիրատուին ուղղված 09.02.2022թ. N ВН-10/71 գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Вестрон» ООО-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ելնելով այն հանգամանքից, որ արտահանման հսկողության հատուկ ընթացակարգերի իրականացումը պահանջում է ժամանակի և ֆինանսների զգալի լրացուցիչ ծախսեր, որոնք հնարավոր չէր հաշվի առնել սույն ընթացակարգին հայտը ներկայացնելիս, Ընկերությունը չի կարող կնքել պայմանագիր:

Հաշվի առնելով պատվիրատուի հետ բազմամյա արդյունավետ համագործակցությունը՝ «Վեստրոն» ՍՊԸ-ն ցավում է ստեղծված իրավիճակի համար և ակնկալում է փոխըմբռնում Ձեր կողմից»:

5. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝

համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 23.02.2022թ.՝ թիվ Ε/40/392-22 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.03.2022թ. թիվ 26/26-1/3579-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.02.2022թ. թիվ Ε/40/392-22 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար էլեկտրոնային տպատախտակների, կապի համապրոցեսորի ռելեների և ավտոմատ անջատիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-9/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Вестрон» ООО-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Вестрон» ООО-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 02.02.2022թ. ծանուցել է «Вестрон» ООО-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Вестрон» ООО-ն Պատվիրատուին ուղղված 09.02.2022թ. N ВН-10/71 գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Вестрон» ООО-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ելնելով այն հանգամանքից, որ արտահանման հսկողության հատուկ ընթացակարգերի իրականացումը պահանջում է ժամանակի և ֆինանսների զգալի լրացուցիչ ծախսեր, որոնք հնարավոր չէր հաշվի առնել սույն ընթացակարգին հայտը ներկայացնելիս, Ընկերությունը չի կարող կնքել պայմանագիր:

Հաշվի առնելով պատվիրատուի հետ բազմամյա արդյունավետ համագործակցությունը՝ «Վեստրոն» ՍՊԸ-ն ցավում է ստեղծված իրավիճակի համար և ակնկալում է փոխըմբռնում Ձեր կողմից»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 23.02.2022թ.՝ թիվ E/40/392-22 գրությամբ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը՝ դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Вестрон» ООО-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում՝ այն է 16.02.2022թ. ներառյալ, Պատվիրատուին չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.03.2022թ. թիվ 26/26-1/3579-2022 գրությամբ «Вестрон» ООО-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**